Ամփոփագիր: Տրանսֆերային գնագոյացման դրդապատճառները հիմնականում վերլուծվում են հարկային պարտավորությունների համատեքստում: Այնուամենայնիվ, գնագոյացման այս հատուկ մեթոդը նաև օգտագործվում է որպես արդյունավետ կառավարման գործիք՝ կազմակերպությունների միջև ներխմբային հարաբերությունների կարգավորման և կառավարչական որոշումներ կայացնելու համար: Տրանսֆերային գներն օգտագործվում են ինչպես առանձին կազմակերպությունների ֆինանսական պատասխանատվության կենտրոնների արդյունավետությունը գնահատելու համար, այնպես էլ խմբերի մակարդակով: Տրանսֆերային գների օգտագործումը (որպես կանոն կապված չլինելով իրական շուկայական գների հետ) թույլ է տալիս վերահսկողություն սահմանել կազմակերպությունների խմբերի (հոլդինգի) ներսում ռազմավարական ցուցանիշների պահանջվող մակարդակի, ֆինանսական պատասխանատվության կենտրոնների և ամբողջ խմբի շահութաբերության ու այլ ֆինանսական ցուցանիշների նկատմամբ, որի շնորհիվ հոլդինգները շուկայում մրցակցային առավելություններ են արձանագրում:

Բանալի բառեր. տրանսֆերային գնագոյացում, կառավարչական որոշումներ, ներխմբային շահեր, շահութաբերություն, ֆինանսական պատասխանատվության կենտրոններ

JEL Classification: G30, G32, H20, H71.

Տրանսֆերային գնագոյացումը կառավարման համակարգում արդյունավետ գործիք է ինչպես առանձին կազմակերպության ներսում, այնպես էլ կապակցված կազմակերպությունների և հոլդինգների շրջանակում: Այն փոխկապակցված հարկ վճարողների միջև իրականացվող վերահսկվող գործարքներում՝ ապրանքների մատակարարման, ոչ նյութական ակտիվների օտարման, աշխատանքների կատարման և

* Արմեն Աշմատի Հակոբյան — ԱԿԲԱ-Կրեդիտ ագրիկոլ բանկ ՓԲԸ, գլխավոր հաշվապահ, տնտեսագիտության դոկտոր, e-mail: armen_hakobyan@hotmail.com

(կամ) ծառայությունների մատուցման, սահմանված ֆինանսական ցուցանիշների որոշման ընթացակարգ է¹:

Ի սկզբանե այն տարածում է ստացել հարկային վերահսկողության բնագավառում, քանի որ վերագրային կորպորացիաները, իրենց հարկային բազան բարձր հարկային դրույքաչափեր ունեցող երկրներից դեպի նպաստավոր հարկային միջավայրում գործող դուստր ձեռնարկություններ տեղափոխելով, կարող են շրջանցել լուրջ հարկային պարտավորություններ: Դա բնականոն հակազդեցության է արժանանում ոչ միայն միջազգային տնտեսական համայնքի, այլև առանձին երկրների կողմից, որոնք կորցնում են բյուջե մուտքագրվելիք հարկային եկամուտներ: Արդյունքում անգամ ձևավորվում են հարկային վեճեր տարբեր երկրների միջև, որոնց տարածքներում գործում են վերագրային կազմակերպությունների մասնաճյուղերը (Fris and Gonnet, 2006): Այս առումով դեռևս 2013 թվականին ՏՀԶԿ-ի հովանու ներքո իրականացվեցին հանրային քննարկումներ՝ ուղղված ոչ նյութական ակտիվների գների հարկային վերահսկողության հարցերին (Revised Discussion Draft on Transfer Pricing Aspects of Intangibles), ինչպես նաև տրանսֆերային գնագոյացման կարգավորմանը (White Paper on Transfer Pricing Documentation), որին հաջորդեց 2015 թվականի տրանսֆերային գնագոյացման հաշվետվությունը՝ ըստ առանձին երկրների (Guidance on Transfer Pricing and Country-by-Country)²: Բացի այդ, ընդունվել են նաև ոլորտին առնչվող այլ կարևորագույն կարգավորող փաստաթղթեր (Հակոբյան, 2018):

Սակայն տրանսֆերային գնագոյացումը, իր գործիքակազմով հանդերձ, արդյունավետ գործիք է ոչ միայն հարկման, այլ նաև բիզնեսի կառավարման և կառավարչական որոշումների կայացման իմաստով: Մեր հետազոտությունները ցույց են տալիս, որ տրանսֆերային գնագոյացումը վերջին տարիներին ակտիվորեն ընդգրկվում է կառավարչական հաշվառման համակարգ և լուրջ դերակատարում ձեռք բերում մրցակցային գործարարության շրջանակներում, ընդ որում կառավարչական հաշվառումը տրանսֆերային գինը սահմանում է որպես շահութաբերություն և մրցունակություն ապահովող նշանող, որի հասանելիությունն էլ փաստում է լավագույն դիրքերի ամրապնդում ձեռներեցության ոլորտում (Հակոբյան, 2019):

¹ ՀՀ հարկային օրենսգիրք, գլուխ 73, հոդված 361, www.arlis.am/

² UN transfer pricing guidance for developing countries could increase burdens on multinationals, <http://www.pwc.com/us/en/washington-national-tax/newsletters/wnts/un-transfer-pricing-guidance-developing-countries.html>

Տրանսֆերային գնագոյացման ընթացակարգը ներառում է մեթոդների համախումբ, որի միջոցով հնարավորություն է ընձեռվում կազմակերպության համար տարանջատելու մի շարք ցուցանիշներ, այդ թվում՝ շահույթի գործակիցներ, առավել արդյունավետ որոշումներ կայացնելու: Ընդհանուր առմամբ այստեղ ձեռնարկատիրությունը գնագոյացման նման մոտեցումն այնքան չի փոխկապակցում շուկայական գների ձևավորման, որքան կառավարչական որոշումների կայացման հետ (Михеева, 2011): Եվ եթե ի սկզբանե տրանսֆերային գները կիրառում էին վերագրային կապակցված կազմակերպությունների հարկային բեռը թեթևացնելու և անգամ հարկային իրական պարտավորություններից խուսափելու համար, ապա հետագայում տրանսֆերային գնագոյացման խնդիր առաջացավ՝ լուծելու նաև միջխմբային գործարքների ժամանակ տնտեսվարման արդյունավետության կառավարչական նպատակադրումներ:

Շուկայական և տրանսֆերային գների զուգակցումը ինչպես առանձին կազմակերպություններում, այնպես էլ կապակցված խմբավորումներում (հոլդինգներ, ֆինանսարտադրական կլաստերներ, դուստր ձեռնարկություններով գործող գլխամասային կազմակերպություններ) լուծում է մարտավարական, ռազմավարական բնույթի կառավարչական խնդիրներ (Короткова, 2012): Մասնավորապես տրանսֆերային գնագոյացումն աջակցում է ծախսերի կրճատմանը, որակի բարձրացմանը, շուկայում մրցակցային դիրքերի ամրապնդմանն ուղղված արդյունավետ կառավարչական որոշումներին: Հետևաբար՝ տրանսֆերային գներով կառավարչական որոշումների կայացումը նպատակահարմար ենք համարում դիտարկել երկու մոտեցմամբ³.

- առանձին կազմակերպության շրջանակում, որտեղ կապակցված կողմ չկա արտաքին այլ բիզնես միավորների հետ,
- կապակցված ու ներխմբային շահեր ունեցող կազմակերպություններում:

Տրանսֆերային գնագոյացումը՝ որպես կառավարչական որոշումների կայացման գործիք, իր արդյունավետ կիրառումն առանձին կազմակերպությունում գտնում է այն դեպքում, երբ կառավարման օղակներին հաջողվում է ամբողջական կազմակերպությունը վերաձևել ըստ առանձնացված ֆինանսական պատասխանատվության կենտրոնների (ՖՊԿ) (Михеева, 2011): Պատասխանատվության այդ

³ Implemintation and Reporting in a Post BEPS Enviroment, TPMinds, London, 2018 pp. 28-30

կենտրոնները կառավարման առումով ունեն մի շարք առանձնահատկություններ և կառավարչական համակցված որոշումների հասցեատերերն են:

Այստեղ խոսքը չի վերաբերում միայն ծախսային կամ շահույթի ձևավորման պատասխանատվության կենտրոններին. դրանց են միանում նաև ներդրումային կենտրոնները, և ստացվում է այնպես, որ ՖՊԿ-ն ամբողջական իր ձևավորումն է ստանում որպես ծախսերի, շահույթի և ներդրումների ձևավորման ներկազմակերպչական բջիջ, որը կազմակերպությանն է ներկայանում իր գործունեության վերջնարդյունքի գծով սահմանված որոշակի գնով: Հենց տրանսֆերային գինն է այդ տնտեսական բջջի գործունեության արդյունավետությունը որոշելու հիմքը, շահույթն ու շահութաբերությունը և դրանում ներդրումներ կատարելու անհրաժեշտությունը: Փաստորեն տրանսֆերային գների կիրառումը թույլ է տալիս ՖՊԿ-ն դիտարկել որպես տնտեսվարման առանձին միավոր, որը մրցակցային հարաբերությունների մեջ է մտնում որոշակի մեկ կազմակերպության ներսում և նման գնագոյացմամբ նպաստում ներկառավարչական արդյունավետ որոշումների կայացմանը (Девяткина, 2015):

Այնպես, ինչպես օտարերկրյա և հայրենական մասնագիտական գրականության մեջ ու գործնական գործունեության ոլորտում (Դրուրի, Հիլթոն, Շերեմետ, Ջուդուրյան) ընդունված է ծախսերը դասակարգել և վերլուծել հաստատուն և փոփոխուն ծախսերի, հետևյալ վերլուծությունը գրասենյակային կահույքի արտադրության օրինակով կկատարենք այդ մոտեցմամբ: Արտադրության կառավարման օղակը ներկայացնում է երկու ֆինանսական պատասխանատվության կենտրոնով՝ նախապատրաստական և հավաքման արտադրամասեր, որոնց տարածքային բաշխվածությունը համապատասխանաբար կազմում է 60% և 40%: Կազմակերպության 10 000 դրամի վերադիր ծախսերը, որոնք ամբողջական հաստատուն են և կրճատվելու հնարավորություն չունեն, հենց նույն համամասնությամբ էլ բաշխվում են վերոնշյալ արտադրամասերի միջև:

Աղյուսակ 1. Թողարկման ինքնարժեքը սեփական ուժերով կիսաֆարրիկարների թողարկման դեպքում (հազ. դրամ)

Ցուցանիշներ	Ընդամենը	Կիսաֆարրիկատներ	Պատրաստի արտադրանք
Փոփոխուն ծախսեր	20 000	8 000	12 000
Վերադիր ծախսեր	10 000	4 000	6 000
Ընդամենը ծախսեր	30 000	12 000	18 000
Միավորի ինքնարժեք	X	60	90

Նախապատրաստական արտադրամասում թողարկվում են ամսական 200 հատ սեփական արտադրության կիսաֆարրիկատներ՝ միավորը 40 հազ. դրամ փոփոխուն ծախսերով և 60 հազ. դրամ ընդհանուր փաստացի ինքնարժեքով (տե՛ս աղյուսակ 1), որոնք, ի դեպ, հնարավոր է արտաքին մատակարարից գնել ավելի ցածր գնով՝ 50 հազ. դրամ շուկայական արժեքով: Եթե որոշում կայացվի դադարեցնել սեփական ուժերով կիսաֆարրիկատների թողարկումը և դրանք առավել էժան գներով ձեռք բերել շուկայից, ապա վաճառահանվող կահույքի թողարկման ինքնարժեքը անփոփոխ վերադիր ծախսերի հաշվին ավելի կթանկանա (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Թողարկման ինքնարժեքը կիսաֆարրիկարները շուկայից գնելու դեպքում (հազ. դրամ)

Ցուցանիշներ	Գումար
Փոփոխուն ծախսեր	12 000
Վերադիր հաստատուն ծախսեր	10 000
Գնման ծախսեր (50 x 200 հատ)	10 000
Ընդամենը ծախսեր	32 000

Այսպիսով, եթե նախապատրաստական արտադրամասի համար չի սահմանվում տրանսֆերային գին, ապա կառավարման օղակը նպատակահարմար է գտնում նման պայմաններում այնտեղ արտադրել առավել թանկ կիսաֆարրիկատ, քան գնել դրսից, քանի որ արտադրամասին վերագրված վերադիր ծախսերը մնում են անփոփոխ, և գնման պարագայում կահույքի թողարկման ընդհանուր ծախսերի աճ է արձանագրվում: Իսկ երբ նախապատրաստական արտադրամասի համար սահմանվում է կիսաֆարրիկատների թողարկման 45 հազ. տրանսֆերային գին, որ, ի դեպ, առավել ցածր է, քան գործող շուկայականը, ապա այդ դեպքում նախապատրաստական արտադրամասն արդեն ներկայացվում է որպես ՖՊԿ՝ ունենալով հավաքման


արտադրամասին «վաճառքից» սեփական հասույթ, և իր աշխատանքով գնահատվում է վնասաբեր.

$$(200 \text{ հատ} \times 45 - 8\,000 - 4\,000) = (3\,000)$$

Տրանսֆերային վաճառքի գին կիրառող արտադրության հավաքման արտադրամասը, հանդես գալով որպես առանձին ֆինանսական պատասխանատվության կենտրոն, առաջարկում է իրականացնել լրացուցիչ ներդրումներ. թափոններով պատրաստել ուղեկցող արտադրանք, որոնք, 200 հատ կիսաֆաբրիկատի թողարկման դեպքում շուկայում վաճառվելով, ՖՊԿ-ին կբերեն 5 000 դրամի լրացուցիչ եկամուտ ու դրանով իսկ հավաքման արտադրամասի գործունեությունը կդարձնեն շահութաբեր.

$$(200 \text{ հատ} \times 45 + 5\,000 - 8\,000 - 4\,000) = 2\,000.$$

Գծապատկեր 1. Տրանսֆերային գնագոյացման մեխանիզմը առանձին կազմակերպության ներսում



Նշում: Կազմվել է հեղինակի կողմից:

Հետևաբար՝ տրանսֆերային գնի կիրառումը նպաստեց նախապատրաստական արտադրամասը ներկայացնելու որպես առանձին ֆինանսական պատասխանատվության կենտրոն, որտեղ լոկալացվեցին ինչպես ծախսերը, այնպես էլ թողարկման ֆինանսական հետևանքներն ու ներդրումային հասույցը: Ավելին, կիսաֆաբրիկատների գծով սահմանված տրանսֆերային գինը մրցակցային դաշտում կիրառվեց գործող շուկայական գնին զուգահեռ և արտադրական թափոնների օգտագործման գծով արդյունավետ ներդրումների իրականացման ռեզերվներ բացահայտեց:

Դրանով իսկ տրանսֆերային գնագոյացումը հնարավորություն է ընձեռում չափելի դարձնելու կազմակերպության ներսում յուրաքանչյուր պատասխանատվության կենտրոնի գործունեության ֆինանսական արդյունքները (տե՛ս գծապատկեր 1) և հիմք ստեղծելու յուրաքան-

յուր ՖՊԿ-ի մրցունակության բարձրացմանն ուղղված կառավարչական որոշումների համար ոչ միայն կազմակերպության ներսում, այլև արտաքին շուկայական միջավայրում (Задорожная, 2015):

Տրանսֆերային գնագոյացումը, ինչպես նշեցինք, արդյունավետ գործիք է համարվում նաև կապակցված կազմակերպությունների միջխմբային մրցակցային գործունեությանն ուղղված կառավարչական որոշումների կայացման ոլորտում: Ներկայումս արդիական է համարվում ռազմավարական հաշվառման ներդրումը հոլդինգներում, ֆինանսաարտադրական կլաստերներում, վերազգային կազմակերպություններում (Керимова, 2010): Եթե ավանդական հաշվապահական հաշվառումը հետահայաց տեղեկատվություն է ներկայացնում բիզնես միավորումների գլխամասային կառավարման մարմիններին, որոնցով որակական եզրահանգումներ են արվում հոլդինգների բիզնես գործունեության անցյալի, նաև ապագա զարգացումների մասին, ապա ռազմավարական հաշվառումն իր կողմից ներկայացվող տեղեկատվությունը թիրախավորում է հոլդինգի գործունեության առաքելությանը (Арутюнова, 2010): Եվ դա իրականացվում է տրանսֆերային գնագոյացման հենքով:

Այսպես, դիտարկենք հոլդինգի օրինակ, որտեղ երեք առանձին կազմակերպություններ, որոնք ընդգրկված են այդ հոլդինգի կազմ, սպասարկում են կահույքագործության բիզնեսը հետևյալ ուղղություններով. փայտամշակման գործարանն ամբողջությամբ իր արտադրանքը փոխանցում է կահույքի արտադրությանը, իսկ վերջինս էլ պատրաստի արտադրանքը վաճառահանման է ուղարկում մասնագիտացված ֆիրմային խանութին: Եվ ստացվում է այնպես, որ կահույքի թողարկման և իրացման շուկայական հասույթը ձևավորվում է միայն մանրածախ առևտրի ոլորտում, իսկ փայտամշակման և պատրաստի արտադրանքի թողարկման ոլորտները հոլդինգում դիտարկվում են որպես ծախսային պատասխանատվության կենտրոններ: Ընդ որում հաշվարկների օգնությամբ նկարագրելիս, եթե հոլդինգի մասշտաբով իրացումից հասույթը կազմում է 3150 հազ. դրամ, վաճառքի ինքնարժեքը՝ 2640 հազ.դրամ, շահույթը՝ 510 հազ. դրամ, վաճառքներից շահութաբերությունը՝ 16% (տե՛ս աղյուսակ 3):

Սակայն նման ընդհանրական կտրվածքով ֆինանսական արդյունքների արձանագրումը չի կարող նպաստել հոլդինգի ռազմավարական արդյունավետ կառավարմանը, քանի դեռ չափելի չի դառնում պատասխանատվության կենտրոնների գործունեության շահութաբերությունը:


Աղյուսակ 3. Շահութաբերության մակարդակի բարձրացման ռեզերվների բացահայտումը հողի հնգում տրանսֆերային գին կիրառելիս (հազ. դրամ)

Ցուցանիշներ	Փայտա- մշակում	Կահույքի թողարկում	Վաճառք	Ընդամենը՝ հողի հնգ
Իրացումից հասույթ	550	1100	1500	3150
Իրացման ինքնարժեք	480	900	1260	2640
Շահույթ	70	200	240	510
Շահութաբերություն	13%	18%	16%	16%

Նշում: Կազմվել է հեղինակի կողմից:

Ռազմավարական կառավարման առումով պատասխանատվության կենտրոնների նման ստորաբաժանումը արդյունավետ չի կարող համարվել, քանի որ այս դեպքում դժվարանում են կազմակերպությունների ֆինանսատնտեսական գործունեության մշտադիտարկումը և դրանց մրցակցային առավելությունների ներուժի օգտագործման հնարավորությունների բացահայտումը: Այս առումով հողի հնգի կառավարման օղակները կազմակերպությունների ներխմաբային գործարքների գծով սկսում է կիրառել տրանսֆերային գներ, որով չափելի է դառնում յուրաքանչյուր կազմակերպության արտադրանքը ոչ միայն թողարկման ինքնարժեքով, այլև վաճառքի հասույթով: Եվ այդ մոտեցմամբ տրանսֆերային գնագոյացումը հնարավորություն է ստեղծում նաև չափելի դարձնելու հողի հնգի կազմ ընդգրկված յուրաքանչյուր կազմակերպության ոչ միայն հասույթը, շահույթն ու շահութաբերությունը, այլ նաև գործարար ակտիվության գրեթե բոլոր ցուցանիշները, որը հետապնդում է ռազմավարական նպատակներ:


Գծապատկեր 2. Հողի հնգի գործարար ակտիվության կառավարչական տեղեկատվական հոսքերը



Ընդ որում ֆինանսական այդ արդյունքները հիմնվում են ոչ թե գործող շուկայական, այլ հոլդինգի ներսում սահմանված տրանսֆերային գների վրա՝ նպատակ ունենալով բացահայտելու յուրաքանչյուր կազմակերպության շահութաբերության կամ գործարար ակտիվության մակարդակը խմբում (Հակոբյան, 2019):

Այսպես, եթե հոլդինգը շուկայում մրցակցային դիրքեր ամրապնդելու նկատառումով իր գործունեության առաքելությունում արձանագրում է ըստ հասույթի շահութաբերության առնվազն 16% մակարդակ, ապա այդ նշանդրը պետք է կիրառելի լինի այդ խմբում ընդգրկված բոլոր կազմակերպությունների և գործարարության ոլորտների (փայտամշակում, կահույքի թողարկում, մանրածախ առևտուր) համար (տե՛ս գծապատկեր 2):

Գծապատկեր 3. Տրանսֆերային գնագոյացման դերը հոլդինգի շահութաբերության նորմայի ապահովման գործընթացում



Նշում: Կազմվել է հեղինակի կողմից:

Ներկայացնելով հոլդինգը որպես առանձին ֆինանսական պատասխանատվության կենտրոնների համախումբ և տրանսֆերային գներով չափելի դարձնելով յուրաքանչյուր կենտրոնի գործունեության արդյունքում ձևավորվող հասույթը պարզ է դառնում, որ փայտամշակման ոլորտը չի ապահովում հոլդինգի գործունեության շահութաբերության նվազագույն 16% մակարդակը (տե՛ս աղյուսակ 3): Փաստորեն հոլդինգում գործող ներխմբային ֆինանսական կապերը գործում են «հաղորդակից անոթների» սկզբունքով, այն է՝ բարձր շահութաբերության ոլորտը փոխհատուցում է ցածր շահութաբերության

ոլորտը, և արդյունքում հողինգը կարողանում է ընդհանուր առմամբ ապահովել ռազմավարական շահութաբերության 16% և ավելի մակարդակ:

Տրանսֆերային գնագոյացում կիրառելով, որն ընդհանրապես որոշակի դեպքում կապ չունի շուկայական իրական գների հետ, հողինգի կառավարման օղակները, բացի փայտամշակման ինքնարժեքի իջեցման գործողություններից (480 հազ.-ից՝ 464 հազ.), միաժամանակ կարող են փայտամշակման ոլորտում իրացման գների փոփոխության միջոցառումներ ձեռնարկել (550 հազ.-ից՝ 555 հազ. և 1100 հազ.-ից՝ 1105 հազ.), որն էլ իր հերթին շղթայական արտացոլում կունենա կահույքի թողարկման և իրացման հաջորդական փուլերով՝ ապահովելով ոչ միայն շահութաբերության մրցակցային մակարդակը հողինգի բոլոր ֆինանսական պատասխանատվության կենտրոններում, այլև կահույքագործական խմբի շահութաբերությունը հասցնելով մինչև 17% (տե՛ս աղյուսակ 4):

Աղյուսակ 4. Շահութաբերության մակարդակի բարձրացումը հողինգում տրանսֆերային գնագոյացում կիրառելիս (հազ. դրամ)

Ցուցանիշներ	Փայտամշակում	Կահույքի թողարկում	Վաճառք	Ընդամենը՝ հողինգ
Իրացումից եկամուտ	555	1105	1500	3160
Իրացման ինքնարժեք	464	905	1265	2634
Շահույթ	91	200	235	526
Շահութաբերություն	16%	18%	16%	17%

Նշում: Կազմվել է հեղինակի կողմից:

Ընդ որում տրանսֆերային գների կիրառմամբ ներհողինգային շահութաբերության չափումը հնարավորություն կստեղծի նաև կիրառելու առավել արդյունավետ պարզևատրումների համակարգ, երբ առանձին ՖՊԿ-ներ ձգտում են ապահովել ռազմավարական և մրցակցային տնտեսական գործունեության ցուցանիշներ:

Այսպիսով, առանձին կազմակերպության ներսում ձևավորված տրանսֆերային գներով շուկայական կարգավորմամբ առք ու վաճառք չի իրականացվում, և գնագոյացումն ընդամենը նպաստում է ֆինանսական պատասխանատվության կենտրոնների ձևավորմանը, ապա ներխմբային կապակցված կազմակերպությունների ներսում տրանսֆերային գնագոյացմամբ ձևավորվում է «իրական վաճառք», միայն

թե ոչ շուկայական, այլ տրանսֆերային գներով, և հստակ է, որ ոչ բոլոր դեպքերում է տրանսֆերային գնագոյացումը կապակցված կազմակերպությունների շրջանակում հարկային բեռի նվազեցման խնդիրներ լուծում: Գործնականում միջխմբային շրջանակում կիրառվող տրանսֆերային գների շնորհիվ իրականացվում է ռազմավարական նպատակադրումներին հասանելիության վերահսկողություն, և այդ ուղղությամբ ընդունվում են կառավարչական որոշումներ:

Գրականություն

References (with English translation and transliteration)

- **Arutyunova D.V.** (2010) “*Strategic Management*”, Textbook / Taganrog: Publishing House of TTI SFU (in Russian).
Арутюнова Д.В. (2010) “*Стратегический менеджмент*”, Учебное пособие/ Таганрог: Изд-во ТТИ ЮФУ.
- **Devyatkina L., Abdrakhanov** (2015) “External and Transfer Pricing in Agricultural Holdings”, Nizhny Novgorod State Agricultural Academy, Materials of a scientific conference (in Russian).
Девяткина Л., Абдраханов (2015) “Внешнее и трансфертное ценообразование в агрохолдингах”, Нижегородская государственная сельскохозяйственная академия, Материалы научной конференции.
- **Fris, Pim and Sébastien Gonnet** (2006) “A European View on Transfer Pricing After Glaxo” (June 1, 2006) Tax Planning International Transfer Pricing (available on the Web at <http://www.bnai.com>), section I.A.
- **Hakobyan A.A.** (2018) “Current Issues of Transfer Pricing Regulation”, Collection of Northwestern Scientific Articles, Yerevan (in Armenian).
Հակոբյան Ա.Ա. (2018) «Տրանսֆերային գնագոյացման կարգավորման արդի հիմնախնդիրները», Հյուսիսափայլ գիտական հոդվածների ժողովածու, Երևան:
- **Hakobyan A.A.** (2019) “Management Accounting Function in the Field of Transfer Pricing”, Finance and Accounting, 1 (3), *HUMQ*, Yerevan, (in Armenian).

Հակոբյան Ա.Ա. (2019) «Տրանսֆերային գնագոյացման
ընագավառում կառավարչական հաշվառման
գործառնությունները», Ֆինանսներ և հաշվապահական
հաշվառում, 1(3), “ՀՈՒՄՔ”, Երևան:

- **Kerimova V.E., under the general ed.** (2010) “*Strategic Accounting*”, Moscow, Omega-L (in Russian).
Керимова В.Э., под общей ред. (2010) “*Стратегический учет*”, Москва, Омега-Л.
- **Korotkova V.A.** (2012) “Transfer Pricing in the Formation of the Financial Results of a Holding”, *Voprosi ekonomiki i prava*. 2012. No. 7 (in Russian),
Короткова В.А. (2012) “Трансфертное ценообразование в формировании финансовых результатов холдинга”, *Вопросы экономики и права*. 2012. № 7.
- **Mikheeva I.N.** (2011) “*Transfer Pricing in the Strategic Management of Industrial Holdings*”, *Economics and Management*, 12 (85) (in Russian).
Михеева И.Н. (2011) “Трансфертное ценообразование в стратегическом управлении промышленными холдингами”, *Экономика и управление*, 12(85).
- **Zadorozhnaya A.I.** (2015) “On the Concept of a Transaction for the Purposes of Tax Control of Transfer Pricing”, *Petersburgskiy jurist*, No. 01 (in Russian).
Задорожная А.И. (2015) “О понятии сделки для целей налогового контроля трансфертного ценообразования”, *Петербургский юрист*, № 01.

Ընդունված է 18.10.19
Գրախոսված է 31.10.19

ТРАНСФЕРТНОЕ ЦЕНООБРАЗОВАНИЕ В РАМКАХ УПРАВЛЕНЧЕСКИХ РЕШЕНИЙ

Акопян А.А.

Аннотация. Причины трансфертного ценообразования в основном анализируются в контексте налоговых обязательств. Тем не менее, этот специальный метод ценообразования также используется в качестве эффективного инструмента управления для регулирования внутригрупповых отношений и принятия управленческих решений.

Трансфертное ценообразование может использоваться для оценки эффективности центров финансовой ответственности отдельных организаций. В то же время, использование трансфертного ценообразования также позволяет контролировать требуемый уровень стратегических результатов в группах организаций (холдингах), регулировать уровень прибыльности и других финансовых показателей в центрах финансовой ответственности и всей группы в целом, что позволяет холдинговым компаниям получать конкурентные преимущества на рынке.

Ключевые слова: трансфертное ценообразование, центры финансовой ответственности, управленческие решения, рентабельность, интересы холдинга.

TRANSFER PRICING WITHIN THE FRAMEWORK OF DECISION MAKING

Hakobyan A.A.

Abstract. The reasons for transfer pricing are mainly analysed in the context of tax obligations. However, this special pricing method is also used as an effective management tool for regulating intra-group relationships and making managerial decisions. Of course, transfer pricing is used to evaluate the effectiveness of financial responsibility centres of individual organizations. At the same time, using the transfer pricing also allows to set control over the required level of strategic performance of profitability and other financial ratios of entire group's, as well as regulating the financial responsibility centres, which enables the holding companies to gain competitive advantage in the market.

Keywords: transfer pricing, financial responsibility centres, managerial decisions, profitability, business group's interests.

ԳԻՏԱԿԱՆ ԿՅԱՆՔ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԱՐ ՈՒՂԵՆԻՇՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը (21.05.2019 թ.) Գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունում մասնակցել է «Տնտեսական հեղափոխության հիմնարար ուղենիշները Հայաստանի Հանրապետությունում» գիտաժողովին՝ նվիրված թավշյա հեղափոխության միամյակին (2018-2019թթ.):*

Վարչապետը ողջունել է գիտաժողովի մասնակիցներին և նշել, որ կառավարության համար կարևոր է, որպեսզի գիտական, փորձագիտական հանրությունն իրեն ներգրավված զգա այն գործընթացներում, որոնք այսօր երկրում կատարվում են: «Կառավարությունը չպետք է լինի մեկուսացած և պետք է գիտական, փորձագիտական հանրության հետ լինի մշտական հաղորդակցության մեջ: Իհարկե, սա չի նշանակում, որ բոլոր հարցերում մեր տեսակետները կհամընկնեն, բայց ես համոզված եմ, որ այս տեսակետների բախման, քննարկման ընթացքում ի հայտ կգան արժեքավոր մտքեր, գաղափարներ, որոնք կիրառործվեն, և որոնք կապ չեն ունենա պահի կոնյունկտուրայի հետ, ու որոնք ավելի երկարաժամկետ նշանակություն կունենան», - ասել է Նիկոլ Փաշինյանը:

Այնուհետև զեկույցներով հանդես են եկել տնտեսագետ, փորձագետ Վահագն Խաչատրյանը, ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի դոցենտ, տ.գ.թ., փորձագետ Ատոմ Մարգարյանը, ԳԱԱ-ի տնտեսագիտության ինստիտուտի փոխտնօրեն, տ.գ.թ. Հայկ Մարկոսյանը, ՀՊՄՀ-ի տնտեսագիտության և կառավարման ամբիոնի վարիչի պաշտոնակատար, ՀՀ պաշտպանության նախարարության ՊԱՀՀ-ի հետազոտող-վերլուծաբան, տ.գ.թ., դոցենտ Գայանե Հարությունյանը, տնտեսագիտության դոկտոր, ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի կառավարման և գործարարության ամբիոնի պրոֆեսոր Աշոտ Մարկոսյանը, ՀՊՏՀ «Ամբերդ» հետազոտական կենտրոնի ավագ փորձագետ, տ.գ.դ., պրոֆեսոր Սամվել

* <https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/05/21/Nikol-Pashinyan-visit-to-SCI/>

Ավետիսյանը, ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ, տ.գ.թ. Սվետլանա Դավլաթյանը, ԵՊՀ դասախոս, որակավորված աուդիտոր, տ.գ.դ., դոցենտ Տիգրան Հարությունյանը և ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի բաժնի վարիչ, տ.գ.թ. Մերի Մանուչարյանը:

Նրանք կառավարությանը ներկայացրել են առաջարկություններ, որոնք բխում են 2019թ. փետրվարի 8-ին ընդունված Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության 5-ամյա ծրագրի ելակետային դրույթներից:

Ամփոփելով գիտաժողովի աշխատանքները՝ վարչապետ Փաշինյանը մասնավորապես նշել է. «Ընդհանուր առմամբ կարող եմ ասել, որ գործնականում այստեղ բարձրացված հարցերի ամբողջ շրջանակը Հայաստանի կառավարության գործունեության օրակարգում է, ինչը մեծ հաշվով լավ նորություն է և ցույց է տալիս, որ, այնուամենայնիվ, բացի այս կարգի միջոցառումներից, մեր գիտական և փորձագիտական հանրության հետ հաղորդակցության այլ խողովակներ էլ ունենք և ըստ էության կարողանում ենք ընդհանուր դաշտ ձևավորել, որտեղ աշխատում ենք: Ճիշտ է, հնարավոր է անձամբ, բնականաբար, չեմ կարող բոլորի հետ մեծ ծավալի շփումներ ունենալ, բայց այս քննարկումը ցույց է տալիս, որ մեր կառավարության ներկայացուցիչները, այնուամենայնիվ, շփվում են և ձեզնից նաև հավաքագրած տեղեկատվությունը բերում են և դարձնում կառավարության օրակարգ:

Շատ խոսվեց և խոսվել է փոքր հողակտորների խնդրի մասին: Այժմ կառավարությունում շատ մեծ ինտենսիվությամբ այս խնդրի վրա աշխատում ենք, որպեսզի կարողանանք փոքր և չօգտագործվող հողակտորները շրջանառության մեջ դնել: Եվ այստեղ ամենամեծ խնդիրը, որ պետք է լուծենք, զուտ իրավական է, որպեսզի քաղաքացիների սեփականության իրավունքների խախտումներ տեղի չունենան, և նրանց իրավունքները լիարժեք պաշտպանվեն:

Այստեղ շատ կարևոր նշանակություն տրվեց հանքարդյունաբերության ոլորտում իրական սեփականատերերի բացահայտմանը: Երևի տեղյակ եք, որ մենք ընդերքի ոլորտում իրական սեփականատերերի հայտնաբերման հետ կապված օրենսդրական փաթեթ ենք ներկայացրել, որը սույն թվականի հուլիսի 1-ից մտնում է ուժի մեջ: Իհարկե, դա մասնագիտական շատ նուրբ ոլորտ է, բայց փորձագետները հավաստիացնում են, որ այս օրենսդրական փաթեթն անխու-

սափելի է դարձնելու, որ հանքարդյունաբերության ոլորտում իրական սեփականատերերին կարողանանք բացահայտել, հակառակ դեպքում այդ հանքերը չեն կարող շահագործվել:

Հանքարդյունաբերության հաջորդ շատ կարևոր խնդիրը ոլորտի կառուցվածքն էր, երբ նշվեց, որ մեր հանքարդյունաբերության արտահանման 90 տոկոսը խտանյութն է: Եվ սա, իհարկե, մեծ խնդիր է, ինչը նշանակում է, որ մեր պետությունը, ըստ էության, այս առումով հանքահումքային երկրի կարգավիճակ ունի՝ սրանից բխող բոլոր հետևանքներով: Մեր խնդիրն է այս հանքարդյունաբերության ցիկլը հնարավորինս երկարացնել: Այս կապակցությամբ, իհարկե, կառավարությունը քննարկումներ, բանակցություններ ունի, մի քանի ներդրումային առաջարկներ կան, և մենք հույս ունենք, որ այդ ներդրումային առաջարկներից գոնե մեկն իրականություն կդառնա, և մենք դրա համար կանենք ամեն ինչ: Այստեղ, իհարկե, շատ բան որոշում են ընթացիկ կոնյունկտուրան և երկարաժամկետ կանխատեսումները՝ կապված մետաղների գների հետ, բայց այս առումով կարծես թե կան որոշակի լավատեսական ազդակներ:

Կառավարությունում շատ կարևոր թեմա է ընկերությունների բաժնետոմսերի բաց վաճառքի հարցը: Այստեղ ելույթներից մեկում նշվեց, որ պետք է քննարկել կենսաթոշակային ֆոնդերը ցածր ռիսկային տեխնոլոգիական ոլորտներում ներդնելու հարցը: Ես տեղյակ եմ, որ հենց այս կապակցությամբ նաև մեր կենսաթոշակային ֆոնդերն են որոշակի հետաքրքրություն ցուցաբերել, որպեսզի այս բաժնետոմսերից գնեն և ներդրումներ անեն այդ ոլորտում: Իհարկե, սա առաջին ծիծեռնակն է, մենք հիմա նույնիսկ մտածում ենք, որ գտնենք որևէ պետական ընկերություն, զբաղվենք նրա առողջացման և թափանցիկության հարցերով ու փորձենք նաև արժեթղթերը բորսա հանել, ինչը կքաջալերի այլ ընկերությունների: Սա կարևոր է և՛ ընկերությունների համար, և՛ քաղաքացիների, որովհետև ընկերություններն այս ճանապարհով ներդրումներ ներգրավելու այլընտրանքային աղբյուր են ստանում, բացի բանկերից նաև քաղաքացիներն են ներդրումներ անելու: Այսօր, երբ բավարարվածությամբ գոնե ցույց ենք տալիս, որ օրինակ ավանդների մակարդակը բանկերում աճում է, շատ արագ հակադարձ քննադատություն է հնչում, թե քաղաքացիները ներդնելու ուրիշ տեղ չունեն, ուստի պարզ է, որ պետք է բանկերում ներդնեն: Իսկապես, սա մեծ խնդիր է: Ամբողջ աշխարհում ներդրումների լավագույն ձևերից մեկը համարվում է հենց ընկե-

րությունների IPO կոչված համակարգի գործունեությունը: Իհարկե, այստեղ նաև վենչուրային ֆոնդի մասին հիշատակում եղավ: Դա նույնպես մեր ընթացիկ քննարկումների փուլում է:

Ես ուզում եմ առանձին անդրադառնալ ռազմարդյունաբերության թեմային: Շատ ճիշտ նշվեց, որ ընդհանրապես ռազմական ծախսերը մեր բյուջեում բավականին ծանրակշիռ տեղ ունեն: Լիովին համաձայն եմ այն դիտարկման հետ, թե մենք պետք է այնպես անենք, որ այդ ծախսերը ոչ թե բեռ լինեն, այլ հնարավորություն տնտեսության զարգացման համար, ընդ որում նաև ձեր նշած մեխանիկայի և այլ ոլորտներում: Այս նկատառումով մենք ՀՀ-ում ստեղծում ենք Բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարություն, որի խնդիրը պետք է լինի հենց սա. մենք պետք է փորձենք մեր ունեցած հենքի վրա, էական չէ՝ հենքն ինչպիսին է, կառուցել ահա այդպիսի կառուցվածք, որտեղ կկարողանանք իսկապես մեր զինված ուժերին ժամանակակից չափանիշներին համապատասխանող արտադրանք առաջարկել, բայց նաև մեր նպատակակետը, ինչպես ընդհանուր տնտեսության համար, պետք է լինի արտահանումը, ինչը շատ կարևոր ուղղություն է:

Ընդհանուր առմամբ լավ լուրն այն է, որ 21-րդ դարում տնտեսության առաջատար շարժիչ ուժը դարձել են տեխնոլոգիաները: Ինչո՞ւ է սա մեզ համար լավ լուր, որովհետև տեխնոլոգիաներն այն միջոցն են, որոնք կարող են օգնել մեզ հաղթահարելու մեր տրանսպորտային և այլ բազմաթիվ սահմանափակումներ:

Համացանցում վերջին 20 տարվա ընթացքում աշխարհի տնտեսության առաջատար 20 ընկերությունների մասին հոլովակ է պտտվում, և դրան հետևելով տեսնում ենք, որ եթե, օրինակ, 25 տարի առաջ աշխարհի ամենաառաջատար, թանկարժեք 20 ընկերությունները նրանք էին, որոնք տիրապետում էին նավթի, գազի կամ որևէ նյութական միջոցի, ապա այժմ դա փոխվել է և փոխվել է այնպես, որ հիմա աշխարհի առաջատար ամենահարուստ 20 ընկերությունները նրանք են, որոնք հիմնված են նախկինում բնության մեջ գոյություն չունեցած երևույթների վրա: Սա, կարծում եմ, նոր տնտեսակարգի կարևոր առանձնահատկությունն է, որը մեզ համար լավ լուր է, որովհետև հիմա ամենաթանկ ընկերությունների շարքում առնվազն կեսը նրանք են, որոնք հիմնվում են մի մատերիայի վրա, որը նախկինում ուղղակի գոյություն չի ունեցել, և դա ընդամենը մարդկային մտքի արտադրանք է:

Հետևաբար՝ սա նշանակում է, որ կարելի է ստեղծել նոր և կանխատեսելի երևույթներ, որոնք կարող են առաջ մղել տնտեսությունը: Այս առումով, կարծում եմ, որ սրա համար հիմք է դարձել այն, երբ արդյունավետությունը դարձել է մտածողության կարևոր հենասյուն, որ այն, ինչ անում ենք, ծախսում ենք, օգտագործում, սպառում, պետք է անենք արդյունավետ:

Կարծում եմ՝ արդյունավետությունը և տեխնոլոգիական մտածողությունը մենք պետք է փորձենք մեզ համար դարձնել մենթալիտետ, մտածողության կետ: Այստեղ, իհարկե, համաձայն եմ այն ձևակերպման հետ, որ առանցքային նշանակություն ունի մեր կրթական համակարգը: Այստեղ էլ մենք այսօր դնում ենք արդյունավետության խնդիր, որովհետև եթե մենք օրը 5-6-7 ժամ երեխային զբաղեցնում ենք, պետք է շատ հստակ հաշվարկենք, թե այդ երեխային ինչ ենք տալիս, ինչի համար ենք տալիս և ինչ ենք ստանալու դրա արդյունքում: Սա շատ կարևոր խնդիր է, որովհետև եթե ուսումնասիրենք մեր ծրագրերը, կարող է պարզվել, որ մենք տալիս ենք շատ կամ քիչ ինչ-որ բան, որ երեխային պետք չէ և ոչ միայն երեխային պետք չէ, այլ մեզ բոլորիս պետք չէ, որ մենք երեխային այդ գիտելիքը կամ առարկան փորձենք մատուցել:

Հետևաբար՝ արդյունավետությունը և տաղանդի, աշխատանքի խթանումը, սեփական ուժերին հավատալու գործում մեր քաղաքացիներին աջակցելը բոլոր դեպքերում դառնում են մեր կառավարության ամենակարևոր առաջնահերթությունը:

Հայաստանի Հանրապետությունում չպետք է լինեն այնպիսի երևույթներ՝ սկսած քաղաքական, վերջացրած կրթական համակարգով, որոնք մարդուն անընդհատ ներշնչեն, որ ինքն ինչ-որ բան չի կարող, որ իր մոտ չի ստացվի, որ ինքն անկարող է, որ, միևնույնն է, ոչինչ չի փոխվի և այսպես շարունակ: Հայաստանի Հանրապետությունում թիվ մեկ թշնամին այս մտածողությունն է, որ մենք չենք կարող, որ մենք հնարավորություն չունենք, որ մենք ավելի լավ է հարմարվենք, որ մենք ավելի լավ է ամբիցիաներ չունենանք: Սա առաջին խնդիրն է, այդ թվում՝ տնտեսության ոլորտում: Սա այն ֆենոմենն է, որն իր հետևից բերում է աղքատություն, հուսահատություն, իր հետևից բերում է այն, որ մեր երկրում ընդհանրապես փախեցիվախի մթնոլորտ է ձևավորվում, որ, միևնույնն է, այստեղ հեռանկար չկա, և ոչինչ չի փոխվի:

Այս մտածողությունը փոխելը մեր մեծագույն խնդիրն է, և դա արդեն ֆանտաստիկայի ոլորտից չէ, որովհետև քաղաքական մակարդակում

մենք սա կարողացել ենք անել, մեզ մնում է այդ գործընթացը շարունակել: Որպես փաստ արձանագրված է, որ Հայաստանի Հանրապետության քաղաքացիների քաղաքական վարքի և գործելակերպի փոփոխությունը բերեց քաղաքական փոփոխությունների, և Հայաստանի Հանրապետության քաղաքացիների տնտեսական վարքագծի փոփոխությունը պետք է բերի տնտեսական փոփոխությունների:

Այսօր աշխարհի առաջատար ընկերությունները փնտրում են տաղանդներ, տաղանդներով համակված միջավայր: Երեկ Հարվարդի համալսարանի ուսանողների հետ էի հանդիպում և ասացի, որ մեր ամենաառաջնավարական տեսլականը հետևյալն է. Հայաստանի Հանրապետությունը դարձնենք դրախտ տաղանդների համար, դարձնենք երկիր, որտեղ տաղանդը զարգացնելու, իրացնելու անսահմանափակ հնարավորություններ կան: Ես հավատում եմ, գիտեմ, համոզված եմ և տեսնում եմ, որ մենք հասնելու ենք այդ նպատակին, մեզ պետք են հետևողականություն, աշխատասիրություն, համբերություն և, իհարկե, ինտելեկտուալ աշխատանք, որը մենք իրար հետ անպայման կանենք»:

Գիտաժողովի նպատակն է մշակել հիմնավոր երաշխիքներ երկրի տնտեսության ժամանակակից տեխնոլոգիական հիմքով արագ առաջընթացի, դրա կառուցվածքի արդիականացման, թողարկվող արտադրանքի միջազգային մրցունակության բարձրացման, դրա հիման վրա հումքի փոխարեն մշակող արդյունաբերության գիտատար արտադրանքի արտահանման, երկրի վճարային հաշվեկշռի բարելավման համար:

ԻՆՉ ԱՆԵԼ-2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ՝ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾԱՐԿՈՒՄԸ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը (09.10.2019 թ.) մասնակցել է «ԻՆՉ անել-2. տնտեսական հեղափոխություն՝ ընկալումը և գործարկումը» գիտագործնական խորհրդածողովին՝ նվիրված տնտեսական հեղափոխության իրականացման ուղղությամբ անելիքներին: Խորհրդածողովի շրջանակում ներկայացվել է համանուն գիրքը, որում ամփոփված են ՀՀ առաջատար տնտեսագետների գիտական ուսումնասիրությունների արդյունքներն ու գաղափարները: Նախորդ՝ 2018 թ. նոյեմբերին կայացած «ԻՆՉ անել-1» խորհրդածողովը նվիրված էր տնտեսական հեղափոխության գաղափարական և հայեցակարգային դրույթներին:*

Հանդես գալով ողջույնի խոսքով՝ վարչապետը կարևորել է այն հանգամանքը, որ հանդիպումների այս շարքը դառնում է ավանդական՝ օրակարգում ունենալով ոչ միայն զուտ տնտեսագիտական, այլև հարակից հարցեր ևս: Նիկոլ Փաշինյանը նկատել է՝ տնտեսագիտական բնույթի քննարկումները կարևոր են մտազրոհի տեսակետից, քանի որ մեծ էներգիա են տալիս տնտեսական և ընդհանրապես պետության զարգացման մասին գաղափարներին: «Կարևոր է արձանագրել վերջին շրջանում ավելի ու ավելի հաճախ և բարձրաձայն հնչող այն տեսակետը, որ տնտեսության մեջ առավել կարևոր գործոն են դառնում հոգեբանությունը և տրամադրությունը: Ժամանակակից աշխարհում առավել մեծ շեշտադրում է դրվում այս իրողությունների վրա, որ հանրային տրամադրությունները, հանրային սպասումները, ակնկալիքները շատ ավելի մեծ տնտեսագիտական նշանակություն ունեն, քան երբեմն ուղղակի չոր թվերը և թվերի համադրությունը: Այս քննարկումները մեզ համար կարևոր են հենց այդ տրամադրությունների ստեղծման համար:

Մենք անընդհատ շեշտում ենք, որ Հայաստանի տնտեսական զարգացման հիմքում և ընդհանրապես զարգացման հիմքում թերևս չարժեք տնտեսական զարգացում և զարգացում տերմինները տարանջատել, որովհետև դրանք նույն հասկացություններն են: Հայաստանի Հանրապետության զարգացման հիմքում մենք տեսնում ենք, ինչպես

* <https://www.primeminister.am/hy/press-release/item/2019/10/09/Conference/>

ասել ենք, անհատական ջանքը, անհատի մոտեցումը, ընկալումը, տրամադրությունները: Այս կարգի քննարկումները շատ կարևոր են այդ միջավայրը և մթնոլորտն ուժեղացնելու, համագործակցության տրամաբանությամբ ամրապնդելու համար, որովհետև համագործակցությունը, երկխոսությունն այն կարևոր գործոններից են, որ ապահովում են այն հոգեբանությունը և տրամադրությունը, որոնք իրենց հերթին շատ մեծ ազդեցություն են ունենում տնտեսության վրա: Կարծում եմ, որ 2019 թ. և ընթացիկ տնտեսական իրավիճակը, ցուցանիշները, որոնք ունենք, գալիս են ապացուցելու այս թեզի ճշմարտացիությունը, այն է՝ տրամադրությունը, սպասումները, մթնոլորտը շատ էական նշանակություն ունեն տնտեսական իրավիճակի համար: Հայաստանում իսկապես տնտեսական գործունեության շատ լավ տրամադրություն է ստեղծվել, և մեր հիմնական խնդիրը պետք է լինի այդ տրամադրությունն ամրապնդելը», - նշել է կառավարության ղեկավարը: Վարչապետի խոսքով, իհարկե, կան կարգավորումների, տնտեսական գործունեության հնարավորություններն ընդլայնելու, տնտեսվարող սուբյեկտների համար հավասար դաշտ ստեղծելու հրամայականներ, որոնք առաջնահերթություն են և նաև նման քննարկումներում օգտակար՝ հասկանալու առավել ճշգրիտ և արդյունավետ ճանապարհը: Նիկոլ Փաշինյանը նշել է, որ գիրքը կարդացել է դեռևս հուլիս ամսին և մաղթել արդյունավետ քննարկում:

Խորհրդաժողովի ընթացքում ներկայացվել են զեկուցումներ ՀՀ սոցիալ-տնտեսական զարգացման նոր ուղեգծի տեսլականի, ՀՀ-ում տնտեսական հեղափոխության նախադրյալների, պետական կառավարման որակի, ստվերային տնտեսության ազդեցության, ինստիտուցիոնալ, ագրարային, կրթության, գիտության համակարգերի զարգացման վերաբերյալ:

Վարչապետ Փաշինյանը մի շարք դիտարկումներ է արել՝ անդրադառնալով ստվերի դեմ պայքարի ուղղությամբ իրականացվող քայլերին և ընդգծելով գործընկերության տրամաբանության կարևորությունը. «Այստեղ մենք ունենք և՛ լավ, և՛ վատ նորություններ: Լավ նորությունն այն է, որ Արժույթի միջազգային հիմնադրամն իր վերջին զեկույցներից մեկում արձանագրել է, որ, որպես ստվերի կրճատման ցուցանիշ, եթե ՀՀ-ում հարկեր-ՀՆԱ ցուցանիշը տարեկան 0.3 տոկոսի շարժ ունենա, դա կհամարվի լավագույն հաջողություն ՀՀ-ի համար: Այս տարվա կանխատեսումներով կամ այսօրվա վիճակով մենք հարկեր-ՀՆԱ ցուցանիշը բարելավել ենք մոտավորապես 1.2 տոկոսով,

այսինքն՝ ԱՄՀ-ի լավագույն հանձնարարականներից 4 անգամ ավելի: Իհարկե, տարվա արդյունքներով տեմպը գուցեև որոշակի փոփոխություններ կրի, բայց ուզում եմ ասել, որ կան ակնհայտ փաստեր, որոնք վկայում են, որ ստվերի կրճատման հետ կապված աննախադեպ իրավիճակներ ունենք: Վատ նորություններ էլ կան, որոնք վերաբերում են վարքագծային բաղադրիչին: Այս տարի Գյումրիում անցկացված Անկախության օրվա տոնակատարությունների շրջանակում Գյումրի է այցելել 15 հազար մարդ, ռեստորաններում, սրճարաններում տեղ չի եղել, ինչը վկայում է, որ շատ մեծ տնտեսական շարժ է եղել: Հետաքրքրվեցի՝ Գյումրիում սեպտեմբերի 21-ին առևտուրն ինչ շարժ է արձանագրել: Ինձ համար անսպասելի իրողություն պարզվեց, որ ՀԴՄ կտրոնները տպվել են նույնքան, որքան նախորդ օրերին: Ընդամենը առևտրի ծավալը 10 մլն դրամով մեծացել է, բայց ընդհանուր տպված ՀԴՄ կտրոնների թիվը չի փոխվել: Սա իրականում շատ վատ նորություն է. ես գործընկերություն ասելով սա նկատի ունեմ: Իհարկե, այդ օրը Գյումրիի մեր հարգելի գործարարներն իմացել են, որ հարկային ծառայությունն այդ օրը ոչինչ չի անելու: Կառավարությունն իր գործողություններով այդպիսի մասշտաբային միջոցառում է իրականացրել, որը Գյումրիի բիզնեսի համար մի աննախադեպ հնարավորություն է, որի արդյունքները մինչ այսօր էլ նկատվում են, բայց այդ բիզնեսն իր կողմից կես քայլ պետք է անի՝, թե՛ կես քայլ չպետք է անի: Գործընկերության տրամաբանությունը շատ կարևոր է. չի կարող տնտեսական հեղափոխությունը լինել մենախոսություն, դա պետք է լինի երկխոսություն: Բայց այս օրինակը վկայում է, որ կառավարության ջանքերին ընդառաջ բիզնեսն առայժմ նույնիսկ կես քայլ չի անում», - նշել է վարչապետը: Նրա խոսքով 2019 թ. առաջին 10 ամիսների ընթացքում նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ Հայաստանում 85 մլն հատ ՀԴՄ կտրոն ավելի է տպվել, ինչը վկայում է դրական դինամիկայի մասին:

Իր խոսքում վարչապետն անդրադարձել է նաև տնտեսական գործունեության իրականացման գործում մարդկային կապիտալի, ներուժի կարևորությանը, աշխատանքի շուկային, շուկայական տնտեսությանը և մի շարք այլ հարցադրումների: Խոսելով բիզնես գործունեության կանոնների մասին՝ կառավարության ղեկավարը նշել է, որ պետական կառավարման համակարգի, ինչպես նաև բիզնեսի համար սահմանված կանոնները շատ պարզ են. «Իմ կարծիքով այդ կանոնները հետևյալն են.

- Մի՛ գողացիր, որը վերաբերում է և՛ պետական պաշտոնյային, և՛ բիզնեսին, որովհետև այն գործարարը, որը ՀԴՄ կտրոն չի տպում, գողանում է, ինչպես նաև այն պետական պաշտոնյան, որը ՀԴՄ-ով եկած փողի մի մասը գողանում է:

- Եղի՛ր առավել արդյունավետ բիզնեսը կառավարելիս և պետական միջոցը ծախսելիս:

- Եղի՛ր նորարար:

- Եղի՛ր համագործակցող»:

Նիկոլ Փաշինյանն անդրադարձել է կառավարության կողմից բիզնես գործունեության համար տրվող հարկային արտոնություններին, այդ թվում նաև սահմանամերձ բնակավայրերում, կրթական համակարգի բարեփոխումներին, կառավարություն-բիզնես գործընկերության զարգացմանը և այլ թեմաների:

Վարչապետը, արդյունավետ համարելով նման քննարկումները, կարևորել է դրանց պարբերական կազմակերպումը, ինչպես նաև փորձագիտական շրջանակների ներգրավվածության ընդլայնումը՝ նպատակադրում ունենալով ճեղքում ապահովող մտքերի գեներացումը:

Հուշագիր հեղինակին

Տնտեսագիտական հետազոտությունների որակի բարձրացման նպատակով ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը որոշում կայացրեց հրատարակել «Հայկական տնտեսագիտական հանդես»: Խնդիր է դրված ապահովել հանդեսի պատշաճ մակարդակը, նպաստել տնտեսության հիմնախնդիրների լուծմանը, Հայաստանի տնտեսագիտական մտքի միջազգային ճանաչմանը: Մենք կներդնենք բոլոր ուժերը, որպեսզի հանդեսը դրական ազդեցություն ունենա ՀՀ տնտեսության զարգացման վրա: Մեր նպատակը հոդվածների որակի, այլ ոչ թե քանակի ապահովումն է: Անգլերեն և ռուսերեն հոդվածները ցանկալի են:

Տեքստ

- Հոդվածները ներկայացվում են համակարգչային շարվածքով (MS Word կամ LaTeX), “Sylfaen” տառատեսակով, 12 տառաչափով: Հոդվածը նպատակահարմար է ներկայացնել 10-15 էջի շրջանակում:
- Էջը պետք է համապատասխանի A4 չափին, բոլոր կողմերի լուսանցքները՝ 2սմ: Տողերի միջև բացվածքը՝ 1.15՝ առանց պարբերությունների միջև հավելյալ հեռավորության:
- Հոդվածի տեքստը նպատակահարմար է, որ բաղկացած լինի նվազագույնը 3 ենթագլխից, որոնց մեջ ցանկալի են ներածական և հոդվածի բովանդակությունը եզրակացնող բաժիններ:

Առաջաբան

- Հայերեն և ռուսերեն վերնագրերը՝ 12 բառից ոչ ավելի, անգլերենը՝ 15 բառ: Ամփոփագիրը՝ 80-150 բառ, անգլերենը՝ 100-180 բառ:
- Ներկայացնել 5-8 բանալի բառեր, 3 և ավելի JEL կոդ:
- Վերնագիրը, հեղինակի կամ հեղինակների տվյալները, ամփոփագիրը և բանալի բառերը անհրաժեշտ է ներկայացնել հայերեն, ռուսերեն և անգլերեն:

Հղումներ

- Գծապատկերներում և աղյուսակներում նշել տեղեկատվության աղբյուրը:
- Գրքերի, հոդվածների հղումները պետք է արվեն տեքստի մեջ՝ փակագծում նշելով հեղինակի կամ հեղինակների ազգանունները, տպագրության տարեթիվը և ըստ անհրաժեշտության էջը:
- Եթե հոդվածում առկա են նույն հեղինակից միևնույն տարում տպագրված 2 և ավելի հղում, ապա հղման տարեթիվից հետո նշվում է լատինական տառ՝ ըստ հերթականության: Օրինակներ (Սուվարյան, 2017, Մարգարյան, 1999, էջ15), (Айвазян 2018), (Acemoglu, 2017a), (Acemoglu, 2017b), (ADB, 2019):
- Ինտերնետային հղումները, օրենքները և այլ նշումներ արվում են տողատակում:

Գրականության ցանկ

- Օտարալեզու հղումները պետք է ներկայացվեն նաև անգլերեն:
- Գրականության ցանկում ներկայացնել միայն նյութին առնչվող հոդվածները, գրքերը և զեկույցները:
- Այբբենական կարգով տրվում են հեղինակների ազգանունները և անվան սկզբնատառերը, փակագծի մեջ՝ տպագրության տարեթիվը և անհրաժեշտության դեպքում նաև հերթական լատինատառ համարը, որից հետո վերնագիրը և նյութի վերաբերյալ այլ տեղեկատվություն, շեղատառերով՝ գրքերի և հանդեսների անունները:
- Գրականության ցանկի օրինակները ներկայացված են հանդեսում զետեղված հոդվածներում:

Памятка автору

Президиум Национальной академии наук Республики Армения с целью повышения уровня экономических исследований принял решение публиковать Армянский экономический журнала. Поставлена задача обеспечить надлежащее качество журнала, способствовать решению экономических проблем, международному признанию экономической мысли Армении. Мы приложим все усилия, чтобы журнал оказал ощутимое и положительное влияние на развитие экономики Армении. Наша цель обеспечить качество, а не количество публикаций.

Текст

- Статьи должны быть представлены в компьютерном наборе (MS Word или LaTeX), шрифтом «Sylfaen», размер шрифта 12. Желательно, чтобы статья имела объем 10-15 страниц.
- Страница статьи должна соответствовать формату A4 с полями 2 см со всех сторон. Межстрочный интервал – 1.15, без интервала между абзацами.
- Текст статьи должен состоять как минимум из 3 подразделов, желательны вводный и заключительный раздел статьи.

Введение

- Русский заголовок – не более 12 слов, английский – 15. Аннотация – 80-150 слов, на английском – 100-180 слов.
- Представить 5-8 ключевых слов, 3 или более классификаций JEL.
- Название, данные автора или авторов, аннотация и ключевые слова должны быть представлены на русском и английском.

Ссылки

- В схемах и таблицах следует указать источник.
- Ссылки на книги, статьи и отчеты должны быть представлены в скобках, указывающие фамилию автора(ов), дату публикации и по необходимости страницу.
- Если статья содержит 2 или более ссылок одного автора, опубликованных в том же году, то после даты публикации ставится последующая латинская буква. Примеры: (Suvaryan, 2017; Гринберг 1999, с.15), (Айвазян, 2018), (Acemoglu, 2017a), (Acemoglu, 2017b), (ADB, 2019).
- Ссылки на интернет – источники, законодательные акты и другие ссылки желательно давать в сносках.

Список литературы

- Неанглийские ссылки также должны быть представлены на английском языке.
- В список литературы должны быть включены только представленные в работе статьи, книги и отчеты.
- В алфавитном порядке должны быть указаны фамилии и инициалы авторов, в скобках дата публикации и, при необходимости, последующая латинская буква, затем заголовок и другие данные о материале. Названия книг и журналов представить курсивным шрифтом.
- Примеры списка литературы представлены в статьях журнала.

Author Guidelines

The Presidium of the National Academy of Sciences of the Republic of Armenia decided to publish the “Armenian Economic Journal” in order to increase the level of economic research. The task was set to ensure the proper quality of the journal, to contribute to the solution of economic problems, to the international recognition of the economic thought of Armenia. We will make every effort to ensure that the magazine has a tangible and positive impact on the development of the Armenian economy. Our goal is to provide quality, rather than quantity, of publications.

Text

- Articles should be presented in MS Word or LaTeX, font “Sylfaen”, font size 12. The article should be 10-15 pages long.
- The page size must be A4, with 2 cm margins on all sides. Line spacing - 1.15, no spacing between paragraphs.
- The text of the article should have at least 3 sections, the introductory and final section of the article are desirable.

Introduction

- The title must be no more than 15 words, the annotation – 100-180 words.
- Submit 5-8 keywords and 3 or more JEL classifications.

References

- Links to books, articles and reports should be presented in brackets indicating the name of the author(s), date of publication and, if necessary, the page.
- If the article contains 2 or more references of one author published in the same year, then the subsequent Latin letter is put after the publication date. Examples: (Suvaryan, 2017; Grinberg 1999, p.15), (Aivazian, 2018), (Acemoglu, 2017a), (Acemoglu, 2017b), (ADB, 2019).
- It is advisable to provide links to Internet sources, legislative acts and other similar sources in footnotes.

Bibliography

- Only articles, books and reports presented in the work should be included in the list of references.
- The names and initials of the authors should be indicated in alphabetical order, then in parentheses the date of publication, the title, other data about the material. The names of books and journals should be in *Italic*.
- Examples of references are presented in articles of the journal.

Հրատ. խմբագիրներ՝ Ա.Սահակյան, Ն.Նանասյան
Համակարգչային օպերատոր՝ Ա. Մելքումյան

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան, Մարշալ Բաղրամյան 24,
հեռ. 521362, էլ. փոստ՝ humdep@sci.am

Адрес редакции: 0019, пр. Маршала Баграмяна 24,
тел. 521362, эл. почта: humdep@sci.am

Address: 24 Marshal Bagramyan av., Yerevan 0019,
tel. 521362, E-mail: humdep@sci.am

Հրատ. պատվեր № 979
Ստորագրված է տպագրության՝ 28.11.2019թ.:
Չափսը՝ 70 x 100 $\frac{1}{16}$, 11,25 տպագր. մամուլ:
Տպաքանակը՝ 150 օրինակ:
Գինը՝ պայմանագրային:

ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչության տպարան,
Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24: